



*Եվրոպայի խորհրդի պայմանագրեր - Թիվ 201*

Մեռական շահագործումից և  
սեռական բնույթի բռնություններից  
և քրեական պաշտպանության  
մասին Եվրոպայի խորհրդի  
կոնվենցիա

ոչ պաշտոնական թարգմանություն

Լանգարոտ, հոկտեմբերի 25-ը, 2007թ.

## **Նախաբան**

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և ներքստորագրյալ այլ կողմերը,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է առավել սերտ միասնության հասնել իր անդամ պետությունների միջև,

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր երեխա ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից անչափահասության կարգավիճակով պայմանավորված պաշտպանության միջոցների իրավունք,

Դիտարկելով, որ երեխաների սեռական շահագործումը, մասնավորապես երեխաների պռնկագրության ու պռնկության դրսևորումները, և երեխաների դեմ սեռական բնույթի բռնությունների բոլոր ձևերը, այդ թվում՝ արտասահմանում կատարված գործողությունները, քայքայիչ են երեխաների առողջության և սոցիալ-հոգևբանական զարգացման համար,

Դիտարկելով, որ երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների դրսևորումները անհանգստացնող չափերի են հասել պետական և միջազգային մակարդակներում, մասնավորապես երեխաների և հանցագործների կողմից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման պարագայում, և որ երեխաների սեռական շահագործումը և սեռական բնույթի բռնությունների դրսևորումների կանխման և դրանց դեմ պայքարի համար միջազգային համագործակցություն է պահանջվում,

Հաշվի առնելով, որ երեխաների բարեկեցությունը և նրանց բարձրագույն շահերը հիմնարար արժեքներ են, որոնց սատարում են բոլոր անդամ պետությունները, և որոնք պետք է խթանվեն առանց որևէ խտրականության,

Հիշատակելով Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովին (Վարշավա, 2005թ. մայիսի 16-17-ը) ընդունած Գործողությունների ծրագիրը, որով երեխաների սեռական շահագործմանը վերջ դնելու միջոցներ մշակելու կոչ է արվում,

Հիշատակելով, մասնավորապես, Նախարարների կոմիտեի Թիվ (91) 11 հանձնարարականը երեխաների և երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պռնկագրության ու պռնկության և թրաֆիկինգի մասին, Թիվ (2001)16 հանձնարարականը սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին, ինչպես նաև Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Թիվ 197),

Մտապահելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (1950թ., Թիվ 5), վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996թ., Թիվ 163) և Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան (1996թ., Թիվ 160),

Մտապահելով նաև Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, հատկապես դրա Հոդված 34-ը, Երեխաների վաճառքի, երեխաների պռնկության և երեխաների պռնկագրության մասին կամընտիր արձանագրությունը, Միավորված ազգերի կազմակերպության Միջպետական կազմակերպված հանցագործությունների դեմ կոնվենցիան համալրող Մարդկանց՝ հատկապես կանանց և երեխաների թրաֆիկինգը կանխելու, ճնշելու և պատժելու մասին արձանագրությունը, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության Երեխաների աշխատանքի վատագույն ձևերի արգելմանն ու վերացմանն ուղղված անհապաղ գործողությունների մասին կոնվենցիան,

Մտապահելով Եվրոպական միության խորհրդի Երեխաների շահագործման և երեխաների պաշտպանության դեմ պայքարի մասին շրջանակային որոշումը (2004/68/JHA), Եվրոպական միության խորհրդի Քրեական ընթացակարգում տուժողների կարգավիճակի մասին շրջանակային որոշումը (2001/220/JHA) և Եվրոպական միության խորհրդի Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի մասին շրջանակային որոշումը (2002/629/JHA),

Պատշաճ ուշադրություն դարձնելով այս բնագավառին վերաբերող միջազգային փաստաթղթերին և ծրագրերին, հատկապես Առևտրային նպատակներով երեխաների սնռական շահագործման դեմ համաշխարհային առաջին կոնգրեսում (1996թ. օգոստոսի 27-31-ը) ընդունված Ստոկհոլմի հռչակագրին և գործողությունների օրակարգին, Առևտրային նպատակներով երեխաների սնռական շահագործման դեմ համաշխարհային երկրորդ կոնգրեսում (2001թ. դեկտեմբերի 17-20-ը) ընդունված Յոկոհամայի համընդհանուր պարտավորությանը, Առևտրային նպատակներով երեխաների սնռական շահագործման դեմ համաշխարհային երկրորդ կոնգրեսի նախապատրաստական համաժողովին (2001թ. նոյեմբերի 20-21-ը) ընդունված Բուդապեշտի պարտավորությանը և գործողությունների ծրագրին, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի Թիվ S-27/2 բանաձևին՝ «Երեխաների համար համապատասխան աշխարհ» անվանմամբ, և Երրորդ գազաթաժողովից հետո ընդունված և Մոնակոյի համաժողովում (2006թ. ապրիլի 4-5-ը) մեկնարկված «Կառուցենք Եվրոպա երեխաների համար և նրանց հետ» եռամյա ծրագրին,

Հաստատական լինելով արդյունավետ կերպով նպաստել սնռական շահագործումից և սնռական բնույթի բռնություններից, անկախ կատարողից, երեխաների պաշտպանության և տուժողների աջակցության ընդհանուր նպատակի իրականացմանը,

Ի նկատի ունենալով երեխաների շահագործման և երեխաների դեմ սնռական բնույթի բռնությունների բոլոր դրսևորումների դեմ պայքարի կանխարգելիչ, պաշտպանող և քրեական իրավունքի տեսանկյունների շեշտադրմամբ համապարփակ միջազգային փաստաթուղթ մշակելու և կոնկրետ վերահսկող մեխանիզմ հիմնադրելու անհրաժեշտությունը,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

## Գլուխ I – Նպատակները, հակախտրականության սկզբունքը և սահմանումները

### Հոդված 1 – Նպատակները

- 1 Սույն կոնվենցիայի նպատակներն են.
  - ա. կանխել երեխաների սնռական շահագործումը և սնռական բնույթի բռնությունները և պայքարել այդ դրսևորումների դեմ,
  - բ. պաշտպանել սնռական շահագործման և սնռական բնույթի բռնությունից տուժող երեխաների իրավունքները,
  - գ. լսեցնել պետական և միջազգային համագործակցությունը երեխաների շահագործման և սնռական բնույթի բռնությունների դեմ պայքարի բնագավառում:
- 2 Պայմանավորվող կողմերի կողմից կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրառումը երաշխավորելու նպատակով՝ սույն կոնվենցիան կոնկրետ վերահսկման մեխանիզմ է նախատեսում:

**Հոդված 2 – Հակախտրականության սկզբունքը**

Պայմանավորվող կողմերի կողմից սույն կոնվենցիայի դրույթների՝ հատկապես տուժողների իրավունքների պաշտպանության համար նախատեսված միջոցների կիրառումը երաշխավորվում է առանց որևէ խտրականության սեռային, ռասայական, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելիության, սեփականության, ծննդի, սեռական կողմնորոշման, առողջական վիճակի, հաշմանդամության կամ այլ կարգավիճակի հիման վրա:

**Հոդված 3 – Սահմանումներ**

Սույն կոնվենցիայի շրջանակներում.

- ա. «երեխա» նշանակում է 18 տարին չլրացած ցանկացած անձ,
- բ. «երեխաների սեռական շահագործում և սեռական բնույթի բռնություններ» հասկացությունը ներառում է սույն կոնվենցիայի 18-ից 23 հոդվածներում նշված վարքագծերը,
- գ. «տուժող» նշանակում է սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնության ենթարկված ցանկացած երեխա:

**Գլուխ II – Կանխարգելիչ միջոցառումներ**

**Հոդված 4 – Սկզբունքներ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների ցանկացած դրսևորում կանխելու և երեխաներին պաշտպանելու նպատակով:

**Հոդված 5 – Երեխաների հետ անմիջական շփում ունեցող անձանց աշխատանքի նպատակով հավաքագրումը, վերապատրաստումը և նրանց իրազեկության բարձրացումը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ խրախուսելու երեխաների պաշտպանության և իրավունքների շուրջ իրազեկության բարձրացումը կրթական, առողջապահական, սոցիալական պաշտպանության, արդարադատության և իրավապահ մարմինների, ինչպես նաև սպորտին, մշակույթին և հանգստին առնչվող բնագավառներում երեխաների հետ կանոնավոր շփում ունեցողների շրջանում:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ պարբերություն 1-ում նշված անձինք համապատասխան գիտելիքներ ունենան երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների, դրանց ճանաչման ձևերի և Հոդված 12-ի պարբերություն 1-ում նշված հնարավորության վերաբերյալ:
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ երաշխավորելու, որ երեխաների հետ կանոնավոր շփում ենթադրող մասնագիտություններ ստանձնելու համար անհրաժեշտ պայմաններ երաշխավորեն առ այն, որ այդ մասնագիտությունների թեկնածուները երբևէ մեղավոր չեն ճանաչվել երեխաների սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնություններ կատարելու մեջ:

**Հոդված 6 – Երեխաների կրթությունը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ առաջնային և միջնակարգ կրթության ընթացքում երեխաները տեղեկատվություն ստանան սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների ռիսկերի, ինչպես նաև պաշտպանվելու միջոցների վերաբերյալ՝ իրենց զարգացող ընկալունակությանը համապատասխան: Այս տեղեկատվությունը, որն ըստ նպատակահարմարության տրամադրվում է ծնողների հետ համագործակցությամբ, պետք է տրվի սեռական զարգացման վերաբերյալ տեղեկատվության առավել ընդհանուր համատեքստում, ընդ որում հատուկ ուշադրություն դարձնելով ռիսկային իրավիճակներին՝ հատկապես նոր տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման առնչությամբ:

**Հոդված 7 – Կանխարգելիչ միջամտության ծրագրեր և միջոցառումներ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ այն անձանց համար, ովքեր մտավախություն ունեն, որ կարող են կատարել սույն կոնվենցիային համապատասխան սահմանված օրինախախտումներից որևէ մեկը, մատչելի լինեն արդյունավետ միջամտության ծրագրեր կամ միջոցառումներ, որոնք ուղղված են գնահատելու և կանխելու օրինախախտումների կատարման ռիսկը:

**Հոդված 8 – Լայն հասարակության համար նախատեսված միջոցառումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է կամ իրականացնում է իրազեկության բարձրագույն արշավներ, որոնք ուղղված են լայն հասարակությանը և տեղեկություններ են ապահովում երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների երևույթի և հնարավոր կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ կանխարգելելու կամ արգելելու սույն կոնվենցիային համապատասխան սահմանված օրինախախտումները գովազդող նյութերի տարածումը:

**Հոդված 9 – Երեխաների, մասնավոր սեկտորի, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության մասնակցությունը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ խրախուսում է երեխաների մասնակցությունը՝ նրանց զարգացող ընկալունակությանը համապատասխան, երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների դեմ պայքարին առնչվող պետական քաղաքականության, ծրագրերի կամ այլ նախաձեռնությունների մշակման և իրականացման գործընթացներում:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ խրախուսում է մասնավոր սեկտորի՝ հատկապես տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների սեկտորի, զբոսաշրջության, բանկային և ֆինանսական սեկտորների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների դեմ պայքարին առնչվող պետական քաղաքականության զարգացման և իրականացման գործընթացներում և նրանց կողմից ներքին նորմերի կիրառումը ինքնակարգավորման կամ համակարգավորման միջոցով:
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ խրախուսում է լրատվամիջոցներին համապատասխան տեղեկատվություն տրամադրել երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների բոլոր հանգամանքների վերաբերյալ՝ լիովին հարգելով լրատվամիջոցների անկախությունը և մամուլի ազատությունը:
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ խրախուսում է երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների կանխարգելմանը և դրանցից երեխաներին պաշտպանելուն ուղղված քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը՝ այդ թվում նաև, ըստ նպատակահարմարության, հիմնադրամների ստեղծման միջոցով:

**Գլուխ III – Մասնագիտացված գործակալություններ և համակարգող մարմիններ**

**Հոդված 10 – Համակարգման և համագործակցության պետական միջոցառումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկում երաշխավորելու պետական կամ տեղական մակարդակներում երեխաների սնռական շահագործման և սնռական բնույթի բռնությունների ցանկացած դրսևորումներից պաշտպանելու, դրանք կանխելու և դրանց դեմ պայքարելու համար պատասխանատու տարբեր հաստատությունների միջև համակարգումը՝ մասնավորապես կրթական, առողջապահական, սոցիալական ծառայությունների ապահովման համակարգերում, իրավապահ և արդարադատության մարմիններում:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ ստեղծելու կամ նշանակելու.
  - ա. անկախ որակյալ պետական կամ տեղական հաստատություններ երեխայի իրավունքների խթանման և պաշտպանության առաքելությամբ՝ դրանց տալով կոնկրետ ռեսուրսներ և պատասխանատվություններ,
  - բ. տվյալների հավաքագրման մեխանիզմներ կամ կետեր պետական կամ տեղական մակարդակներում և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ՝ երեխաների սնռական շահագործման և սնռական բնույթի բռնությունների երևույթն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով, համապատասխան ուշադրություն դարձնելով անձնական տվյալների պաշտպանության պահանջներին:
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ խրախուսում է իրավասու պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր սեկտորի միջև համագործակցությունը՝ երեխաների սնռական շահագործման և սնռական բնույթի բռնությունների դեմ պայքարելու և դրանց առավել արդյունավետ կանխարգելման նպատակով:

**Գլուխ IV – Պաշտպանիչ միջոցառումներ և աջակցություն տուժողներին**

**Հոդված 11 – Սկզբունքներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ հաստատում է արդյունավետ սոցիալական ծրագրեր և ստեղծում է բազմաբնույթ կառույցներ՝ ապահովելու տուժողների, նրանց հարազատների և նրանց խնամքի համար պատասխանատու ցանկացած անձի համար անհրաժեշտ աջակցությունը:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ տուժողի տարիքի հստակության բացակայության և տուժողի երեխա լինելու համար հիմքերի առկայության դեպքում, երեխաներին հասանելիք պաշտպանության և աջակցության միջոցառումները տրամադրվեն տվյալ տուժողին մինչև վերջինի տարիքի հաստատումը:

**Հոդված 12 – Սնռական շահագործման կամ սնռական բնույթի բռնության կասկածի զեկուցումը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ երեխաների հետ շփում ենթադրող որոշ մասնագիտությունների համար պետական օրենսդրությամբ նախատեսված գաղտնիության պահպանման կանոնները խոչընդոտ չեն կարող համարվել նշված մասնագետների կողմից երեխաների պաշտպանության համար պատասխանատու ծառայություններին զեկուցելու հնարավորության համար ցանկացած այնպիսի իրավիճակում, երբ նրանք ողջամիտ հիմքեր ունեն կարծելու, որ երեխան սնռական շահագործման կամ սնռական բնույթի բռնության տուժող է:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ խրախուսելու ցանկացած անձի, ով տեղյակ է կամ բարեխղճորեն կասկածում է երեխաների սնտական շահագործման կամ սնտական բնույթի բռնությունների դրսևորումների մասին, այդ փաստերի մասին զեկուցել իրավասու ծառայություններին:

### **Հոդված 13 – Օգնության թեժ գիծ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ խրախուսելու և խթանելու տեղեկատվական ծառայությունների՝ ինչպես օրինակ հեռախոսային և ինտերնետային օգնության թեժ գծերի ստեղծումը, որոնք զանգահարողներին խորհրդատվություն կապահովեն՝ նույնիսկ գաղտնիության կամ անանուն զանգերի հանդեպ հանդուրժողականության պայմաններում:

### **Հոդված 14 – Աջակցություն տուժողներին**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ աջակցելու տուժողներին, կարճաժամկետ և երկարաժամկետ հիմքերով, վերջինների ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական վերականգնման ընթացքում: Այս պարբերությանը համաձայն ձեռնարկած միջոցառումների շրջանակում պետք է համապատասխան ուշադրություն դարձվի երեխայի կարծիքներին, կարիքներին և մտահոգություններին:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ միջոցառումներ է ձեռնարկում, ներպետական օրենսդրությանը համապատասխան, տուժողներին աջակցություն ցուցաբերող ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ համագործակցելու նպատակով:
3. Սնտական շահագործման կամ սնտական բնույթի բռնությունների դրսևորումներում երեխայի ծնողների կամ խնամակալների ներգրավվածության դեպքում, Հոդված 11-ի պարբերություն 1-ի համապատասխան կիրառվելիք միջամտության ընթացակարգերը ներառում են.
  - ենթադրյալ հանցագործի հեռացման հնարավորությունը,
  - տուժողին ընտանեկան միջավայրից հեռացնելու հնարավորությունը: Նման հեռացման պայմանները և տևողությունը որոշվում է՝ երեխայի բարձրագույն շահերից ելնելով:
4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ տուժողի հարազատները կարողանան, ըստ նպատակահարմարության, օգտվել թերապևտիկ աջակցությունից՝ հատկապես առաջնային հոգեբանական խնամքից:

## **Գլուխ V – Միջամտության ծրագրեր կամ միջոցառումներ**

### **Հոդված 15 – Ընդհանուր սկզբունքներ**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, երաշխավորում է արդյունավետ միջամտության ծրագրեր կամ միջոցառումներ Հոդված 16-ի պարբերություններ 1-ում և 2-ում նշված անձանց համար՝ երեխաների դեմ սնտական բնույթի օրինախախտումների կրկնության ռիսկերի կանխարգելման և նվազեցման նպատակներով: Նման ծրագրերը և միջոցառումները պետք է մատչելի լինեն գործի վարույթի ընթացքում ցանկացած պահի, ազատագրվման վայրի ներսում և դրանից դուրս՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, երաշխավորում է իրավասու մարմինների՝ հատկապես առողջապահական ծառայությունների և սոցիալական ծառայությունների, ինչպես նաև արդարադատության համակարգի և Հոդված 16-ի պարբերություններ 1-ում և 2-ում նշված անձանց հետևելու համար պատասխանատու այլ մարմինների միջև գործընկերության կամ համագործակցության այլ ձևերի գարգացումը:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ապահովում է Հոդված 16-ի պարբերություններ 1-ում և 2-ում նշված անձանց կողմից սույն կոնվենցիայով սահմանված օրինախախտումների կրկնության վտանգի և հնարավոր ռիսկերի գնահատումը՝ համապատասխան ծրագրերի կամ միջոցառումների բացահայտման նպատակով:
4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովում է իրականացվող ծրագրերի և միջոցառումների արդյունավետության գնահատումը:

**Հոդված 16 – Միջամտության ծրագրերի և միջոցառումների շահառուները**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, նրաշխարհում է, որ սույն կոնվենցիային համապատասխան սահմանված օրինախախտումներից որևէ մեկի համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց մատչելի լինեն Հոդված 15-ի պարբերություն 1-ում նշված ծրագրերը կամ միջոցառումներն այնպիսի պայմաններում, որոնք չեն վնասում և չեն հակասում պաշտպանության կողմի իրավունքներին, արդար և անկողմնակալ դատավարության պահանջներին և հատկապես անմեղության կանխավարկածի սկզբունքը կարգավորող կանոնների պատշաճ կիրառմանը:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, նրաշխարհում է, որ սույն կոնվենցիային համապատասխան սահմանված օրինախախտումներից որևէ մեկի համար մեղավոր ճանաչված անձանց մատչելի լինեն Հոդված 15-ի պարբերություն 1-ում նշված ծրագրերը կամ միջոցառումները:
3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, նրաշխարհում է միջամտության ծրագրերի կամ միջոցառումների մշակումը կամ համապատասխանեցումը սեռական բնույթի օրինախախտում կատարած երեխաների՝ այդ թվում քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքին չհասածների զարգացման պահանջներին հարիր՝ նրանց սեռական բնույթի վարքագծային խնդիրներին լուծում տալու նպատակով:

**Հոդված 17 – Տեղակատվություն և համաձայնություն**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, նրաշխարհում է, որ Հոդված 16-ում նշված անձինք, որոնց առնչությամբ միջամտության ծրագրերի կամ միջոցառումների առաջարկ է եղել, լիարժեքորեն տեղեկացված են առաջարկի պատճառաբանություններին և համաձայնություն են տալիս ծրագրի կամ միջոցառման իրականացմանը փաստերի լիարժեք տիրապետման պայմաններում:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, նրաշխարհում է, որ այն անձինք, որոնց առնչությամբ միջամտության ծրագրերի կամ միջոցառումների առաջարկ է եղել, կարող են հրաժարվել դրանցից, իսկ մեղավոր ճանաչված անձանց դեպքում՝ իրազեկված են նման հրաժարումից բխող հնարավոր հետևանքների մասին:

**Գլուխ VI – Նյութական քրեական իրավունք**

**Հոդված 18 – Սեռական բնույթի բռնություններ**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում նրաշխարհում հետևյալ կանխամտածված գործողությունների համար քրեական պատասխանատվության նախատեսումը.
  - ա. սեռական բնույթի գործողությունների իրականացումը այն երեխայի ներգրավմանը, ով, ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համաձայն, չի հասել սեռական գործողությունների համար չափահասության,

- բ. սննդական բնույթի գործողությունների իրականացումը երեխայի հետ.
  - հարկադրանքի, ուժի կամ սպառնալիքի գործադրմամբ, կամ
  - երբ բռնությունն իրականացվում է երեխայի հանդեպ վստահության, իշխանության կամ ազդեցության ճանաչված դիրքից, այդ թվում և՛ ընտանիքի շրջանակներում, կամ
  - երբ բռնությունն իրականացվում է երեխայի առանձնապես խոցելի իրավիճակից օգտվելով՝ հատկապես մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության կամ կախվածության իրավիճակի պայմաններում:
- 2 Վերոնշյալ պարբերություն 1-ի շրջանակներում յուրաքանչյուր կողմ սահմանում է այն նվազագույն տարիքը, որից գաժը արգելվում է սննդական բնույթի գործողություններ իրականացնել երեխայի հետ:
- 3 Պարբերություն 1.ա-ի դրույթները չեն տարածվում երկու անչափահասների միջև փոխհամաձայնեցված սննդական գործողությունների կարգավորման վրա:

#### **Հոդված 19 – Երեխաների պոռնկությանն առնչվող օրինախախտումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու հետևյալ կանխամտածված գործողությունների համար քրեական պատասխանատվության նախատեսումը.
  - ա. երեխային պոռնկության մեջ ներգրավելը կամ երեխայի պոռնկության պատճառ դառնալը,
  - բ. երեխային հարկադրելը պոռնկության մեջ ներգրավելի կամ այդպիսի նպատակներով երեխայի օգտագործումից կամ այլ կերպ շահագործումից շահույթ ստանալը,
  - գ. երեխաների պոռնկությունից օգտվելը:
- 2 Սույն հոդվածի շրջանակներում «երեխաների պոռնկություն» տերմինը նշանակում է սննդական գործողությունների համար երեխայի օգտագործման փաստը, երբ գումար է տրվում կամ փոխհատուցման կամ պայմանավորվածության այլ միջոց է կիրառվում կամ վճարման խոստում է տրվում՝ անկախ նրանից, թե՛ վճարումը, խոստումը կամ պայմանավորվածությունը տրվում է երեխային, թե՛ երրորդ անձի:

#### **Հոդված 20 – Երեխաների ներգրավմամբ պոռնկագրությանը վերաբերող օրինախախտումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու հետևյալ կանխամտածված գործողություններն առանց իրավունքի իրականացնելու համար քրեական պատասխանատվության նախատեսումը.
  - ա. երեխաների ներգրավմամբ պոռնկագրության արտադրությունը,
  - բ. երեխաների ներգրավմամբ պոռնկագրական արտադրանքի առաջարկումը կամ մատչելի դարձնելը,
  - գ. երեխաների ներգրավմամբ պոռնկագրական արտադրանքի տարածումը կամ փոխանցումը,
  - դ. սննդական օգտագործման կամ այլ անձի համար երեխաների ներգրավմամբ պոռնկագրական արտադրանքի ձեռքբերումը,
  - ե. երեխաների ներգրավմամբ պոռնկագրական արտադրանք ունենալը,

- գ. տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով երեխաների պոռնկագրական արտադրանքին գիտակցաբար մուտք ստանալը:
- 2 Սույն հոդվածի շրջանակներում «երեխաների ներգրավմամբ պոռնկագրություն» տերմինը նշանակում է ցանկացած տնտեսական նյութ, որը ցույց է տալիս երեխային ներգրավված իրական կամ ձևացրած սննդական ակնհայտ գործողություններում, կամ երեխայի սննդական օրգանների ցանկացած ցուցադրում գլխավորապես սննդական նպատակներով:
- 3 Յուրաքանչյուր կողմ իրավասու է չկիրառել պոռնկագրական նյութերի արտադրության և ունենալուն վերաբերող պարբերություն 1.ա-ն և 1.ե-ն ամբողջությամբ կամ մասնակիորեն այն պոռնկագրական նյութի դեպքում, որը.
- բաղկացած է բացառապես գոյություն չունեցող երեխայի ձևացրած ներկայացումներից կամ իրական պատկերներից,
  - ներառում է երեխաներ, որոնք հասել են Հոդված 18-ի պարբերություն 2-ի կիրառմամբ սահմանված տարիքին, և իրականացվել է նրա նախաձեռնությամբ և համաձայնությամբ, գտնվում է նրա տնօրինության տակ և բացառապես նախատեսված են նրա անձնական օգտագործման համար:
- 4 Յուրաքանչյուր կողմ իրավասու է չկիրառել պարբերություն 1.գ-ն ամբողջությամբ կամ մասնակիորեն:

**Հոդված 21 – Պոռնկագրական ներկայացումներում երեխաների մասնակցությանն առնչվող օրինախախտումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու հետևյալ կանխամտածված գործողությունների համար քրեական պատասխանատվության նախատեսումը.
- ա. երեխային պոռնկագրական ներկայացումների մեջ ներգրավելը կամ երեխայի՝ պոռնկագրական միջոցառումների մեջ ներգրավվելու պատճառ դառնալը,
  - բ. երեխային հարկադրելը պոռնկագրական ներկայացումների մեջ ներգրավվել կամ այդպիսի նպատակներով երեխայի օգտագործումից կամ այլ կերպ շահագործումից շահույթ ստանալը,
  - գ. երեխաների մասնակցությամբ պոռնկագրական ներկայացումներին գիտակցաբար ներկա գտնվելը:
- 2 Յուրաքանչյուր կողմ իրավասու է պարբերություն 1.գ-ն կիրառել այն դեպքերում, երբ երեխաները ներգրավվել կամ հարկադրվել են պարբերություն 1.ա-ի կամ 1.բ-ի դրույթների համապատասխան:

**Հոդված 22 – Երեխաների այլասերումը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ քրեական պատասխանատվություն նախատեսելու Հոդված 18-ի պարբերություն 2-ի կիրառմամբ սահմանվող տարիքին չհասած երեխային սննդական նպատակներով կանխամտածված կերպով հարկադրելը ներկա լինել սննդական բնույթի բռնությունների կամ սննդական գործողությունների իրականացմանը, նույնիսկ երբ հարկադրված չի դրանց մասնակցել:

**Հոդված 23 – Երեխաների կաշառումը սննդական նպատակներով**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ քրեական պատասխանատվություն նախատեսելու հոդված 18-ի պարբերություն 2-ի կիրառմամբ սահմանվող տարիքին չհասած երեխայի հետ հանդիպելու չափահասի՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով կանխատեսված առաջարկի առնչությամբ՝ նրա հանդեպ հոդված 18-ի պարբերություն 1.ա-ի կամ հոդված 20-ի պարբերություն 1.ա-ի դրույթների համապատասխան օրինախախտումներ իրականացնելու նպատակով, այն դեպքերում, երբ այդ առաջարկին հետևել են նյութական գործողություններ, որոնք հանգեցրել են նման հանդիպման կայացմանը:

**Հոդված 24 – Օժանդակումը կամ հանցակցումը և հանցագործության փորձ կատարելը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների կատարմանը կանխատեսված օժանդակումը կամ հանցակցումը որպես քրեական պատասխանատվություն ենթադրող օրինախախտումներ հաստատելու նպատակով:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների կատարման կանխատեսված փորձերը որպես քրեական պատասխանատվություն ենթադրող օրինախախտումներ հաստատելու նպատակով:
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավասու է չկիրառել ամբողջությամբ կամ մասնակիորեն պարբերություն 2-ը՝ հոդված 20-ի պարբերություններ 1.բ-ի, դ-ի, ե-ի և գ-ի, հոդված 21-ի պարբերություն 1.գ-ի և հոդվածներ 22-ի և 23-ի համաձայն սահմանված օրինախախտումների դեպքում:

**Հոդված 25 – Ընդդատությունը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների համար ընդդատություն հաստատելու համար, եթե օրինախախտումը կատարվել է.
  - ա. իր տարածքում, կամ
  - բ. կողմի դրոշը կրող նավի վրա, կամ
  - գ. կողմի օրենքներով գրանցված օդանավի վրա, կամ
  - դ. իր քաղաքացիների մեկի կողմից, կամ
  - ե. իր տարածքում մշտական բնակություն հաստատած անձի կողմից:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների համար ընդդատություն հաստատելու համար, եթե օրինախախտումը կատարվել է իր քաղաքացիների կամ իր տարածքում մշտական բնակություն հաստատած անձի հանդեպ:
- 3 Յուրաքանչյուր կողմ կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հստակեցնի, որ իրավունք է վերապահում չկիրառել կամ բացառապես կոնկրետ դեպքերում կամ պայմանների առկայության դեպքում կիրառել սույն հոդվածի պարբերություն 1.ե-ով նախատեսված ընդդատության կանոնները:

- 4 Հոդվածներ 18-ի, 19-ի, 20-ի պարբերություն 1.ա-ի և 21-ի պարբերություն 1.ա-ի և բ-ի համաձայն սահմանված օրինախախտումների դատական հետապնդման նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ նրաշխարհելու, որ պարբերություն 1.դ-ի առնչությամբ իր ընդդատությունը կախված չէ կատարման վայրում դրանց քրեական պատասխանատվության ենթակա լինելու հանգամանքից:
- 5 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հստակեցնի, որ իրավունք է վերապահում Հոդված 18-ի պարբերություն 1.բ-ով սահմանված օրինախախտումների առնչությամբ սույն հոդվածի պարբերություն 4-ի կիրառումը նախատեսել միայն այն դեպքերում, երբ իր տարածքն իր քաղաքացու մշտական բնակության վայրն է:
- 6 Սույն կոնվենցիայի Հոդվածներ 18-ի, 19-ի, 20-ի պարբերություն 1.ա-ի և 21-ի պարբերություն 1.ա-ի և բ-ի համաձայն սահմանված օրինախախտումների դատական հետապնդման նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ նրաշխարհելու, որ պարբերություն 1.դ-ի և ե-ի առնչությամբ իր ընդդատությունը կախված չէ այն հանգամանքից, որ դատական հետապնդում կարելի է նախաձեռնել բացառապես տուժողի կողմից ցուցմունք ստանալուց հետո կամ օրինախախտման կատարման վայրի պետության կողմից հրաժարվելու դեպքում:
- 7 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ սույն կոնվենցիայով սահմանված օրինախախտումների համար ընդդատություն սահմանելու այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործը ներկա է իր տարածքում և Պայմանավորվող կողմը նրան չի հանձնում մեկ այլ Պայմանավորվող կողմի միայն նրա քաղաքացիության հիման վրա:
- 8 Սույն կոնվենցիայով հաստատված ենթադրվող օրինախախտման համար մեկից ավելի Պայմանավորվող կողմերի կողմից ընդդատություն պահանջելու դեպքում, խնդրո առարկա Պայմանավորվող կողմերը, ըստ նպատակահարմարության, խորհրդակցում են՝ դատական հետապնդման համար ամենահամապատասխան ընդդատությունը որոշելու նպատակով:
- 9 Սույն կոնվենցիան չի բացառում պետական օրենսդրության համաձայն Պայմանավորվող կողմին ընդդատյա քրեական վարույթի անցկացման ցանկացած դրսևորում, որը չի խախտում միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը:

**Հոդված 26 – Իրավաբանական անձանց պատասխանատվությունը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ նրաշխարհելու իրավաբանական անձի պատասխանատվության ենթարկումը սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտման համար, որը կատարվել է վերջինիս շահերից ելնելով իրավաբանական անձի շրջանակներում ավագ պաշտոն զբաղեցնող որևէ ֆիզիկական անձի կողմից՝ գործելով ինչպես անհատապես, այնպես էլ՝ իրավաբանական անձը ներկայացնող որևէ մարմնի կազմում, հետևյալի հիման վրա.
  - ա. իրավաբանական անձի ներկայացուցչի լիազորագիր,
  - բ. իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու իրավասություն,
  - գ. իրավաբանական անձի շրջանակներում վերահսկողություն իրականացնելու իրավասություն:
- 2 Բացի պարբերություն 1-ում նշված դեպքերից՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ նրաշխարհելու իրավաբանական անձի պատասխանատվության ենթարկումը այն դեպքում, երբ պարբերություն 1-ում նշված ֆիզիկական անձի կողմից հսկողության կամ վերահսկողության բացակայության արդյունքում հնարավոր է դարձել սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտման կատարումը՝ ի օգուտ իրավաբանական անձի շահերի, վերջինիս իրավասության ներքո գործող ֆիզիկական անձի կողմից:

- 3 Իրավաբանական անձի պատասխանատվությունը կարող է ունենալ քրեական, քաղաքացիական կամ վարչական բնույթ՝ կախված կողմի որդեգրած իրավական սկզբունքներից:
- 4 Նման պատասխանատվությունը չպետք է խոչընդոտի իրավաստատումը կատարած ֆիզիկական անձի քրեական պատասխանատվության ենթարկումը:

#### **Հոդված 27 – Պատժամիջոցներ և միջոցառումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների ենթարկումը արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների՝ հաշվի առնելով օրինախախտման ծանրությունը: Այս պատժամիջոցների թվում են ազատազրկում ենթադրող պատիժները, որոնք կարող են հանգեցնել օտարերկրացուն իր պետությանը հանձնելուն:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ Հոդված 26-ի համաձայն պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձինք ենթակա են արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների, որոնք ներառում են դրամական քրեական կամ ոչ քրեական տուգանքներ և կարող են ներառել այլ միջոցներ, մասնավորապես.
  - ա. հանրային արտոնություններից կամ օգնությունից օգտվելու իրավասության բացառում,
  - բ. առևտրային գործունեություն վարելու ժամանակավոր կամ մշտական որակազրկում,
  - գ. դատական վերահսկման ենթարկում,
  - դ. դատական կարգով լուծարում.
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝
  - ա. երաշխավորելու հետևյալի կալանավորումը և բռնագրավումը.
    - ապրանքներ, փաստաթղթեր և այլ միջոցներ, որոնք օգտագործվել են սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների կատարման նպատակով կամ նպատակ են դրանց կատարմանը,
    - նման օրինախախտումներից ստացված շահույթը կամ ստացված շահույթի արժեքին համապատասխան գույք,
  - բ. հնարավոր դարձնելու սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների կատարման համար օգտագործված որևէ հաստատության ժամանակավոր կամ մշտական փակումը՝ առանց խոչընդոտելու բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները, կամ հանցագործին մերժելու այն մասնագիտական կամ կամավոր սկզբունքներով վարած երեխաների հետ շփում ենթադրող գործունեության իրականացումը, որի ընթացքում կատարվել է օրինախախտումը:
- 4 Յուրաքանչյուր կողմ կարող է հանցագործների առնչությամբ այլ միջոցառումներ որդեգրել, ինչպես օրինակ՝ ծնողական իրավունքի զրկումը կամ մեղավոր ճանաչված անձանց հետևելը կամ վերահսկելը:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է հաստատել, որ սույն հոդվածի համաձայն սահմանված տուգանքներից ստացված գումարները կամ բռնագրավված գույքը կարող է հատկացվել հատուկ ֆոնդի՝ կանխարգելման կամ սույն կոնվենցիայի համաձայն սահմանված ցանկացած օրինախախտման տուժողների աջակցության ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

#### **Հոդված 28 – Ծանրացուցիչ հանգամանքներ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ հետևյալ հանգամանքները, եթե արդեն իսկ օրինախախտման բաղկացուցիչ մաս չեն կազմում, կարող են, ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համաձայն, համարվել ծանրացուցիչ հանգամանքներ սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումներին առնչվող պատժամիջոցների սահմանման ժամանակ.

- ա. օրինախախտումը լուրջ վնաս է հասցրել տուժողի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը,
- բ. խոշտանգումներ կամ այլ ծանր բռնություններ են գործադրվել նախքան օրինախախտումը կամ դրա ընթացքում,
- գ. օրինախախտումն իրականացվել է առանձնապես խոցելի տուժողի հանդեպ,
- դ. օրինախախտումը կատարվել է ընտանիքի անդամի, երեխայի հետ համատեղ բնակվող կամ սեփական իրավասությունները չարաշահած անձի կողմից,
- ե. օրինախախտումը կատարվել է միասին գործող մի քանի անձանց կողմից,
- զ. օրինախախտումը կատարվել է քրեածին կազմակերպության շրջանակներում,
- է. հանցագործը նախկին դատվածություն ունի նույնաբնույթ օրինախախտումների համար:

#### **Հոդված 29 – Նախկին դատվածություն**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ հնարավորություններ ապահովելու պատժամիջոցները սահմանելիս հաշվի առնել սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների առնչությամբ մեկ այլ Պայմանավորվող կողմի ամենավերջին ընդունած որոշումը:

### **Գլուխ VII – Հետաքննություն, դատաքննություն և ընթացակարգային դրույթներ**

#### **Հոդված 30 – Սկզբունքներ**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու հետաքննության և քրեական վարույթի իրականացումն ի նպաստ երեխայի բարձրագույն շահերի և երեխայի իրավունքների հանդեպ հարգանքի պարագայում:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ստանձնում է տուժողների հանդեպ պաշտպանական կեցվածք՝ երաշխավորելով, որ հետաքննությունը և քրեական վարույթը չեն ծանրացնում երեխայի ապրած տրավման, և որ քրեական արդարադատության պատասխանին, ըստ նպատակահարմարության, հաջորդում է աջակցությունը:
3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ հետաքննություններին և քրեական վարույթին առաջնահերթություն տրվի, և որ դրանք իրականացվեն առանց որևէ չիմնավորված ուշացման:

- 4 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի, որ սույն գլխի շրջանակներում կիրառելի միջոցառումները չեն խոչընդոտում պաշտպանության իրավունքների իրականացումը և արդար ու անաչառ դատավարության պահանջները՝ համաձայն Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կոնվենցիայի Հոդված 6-ի:
- 5 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքների համաձայն.
  - երաշխավորելու սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների արդյունավետ հետաքննությունը և դատաքննությունը՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով գաղտնի գործողություններ,
  - հնարավորություն ընձեռելու իրավապահ մարմիններին կամ հետաքննչական ծառայություններին հայտնաբերել Հոդված 20-ի համաձայն սահմանված օրինախախտումներից տուժողներին՝ մասնավորապես երեխայի ներգրավմամբ պոռնկագրական նյութեր, ինչպես օրինակ՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով փոխանցված կամ մատչելի դարձրած լուսանկարներ և տեսախոսողական ձայնագրություններ, վերլուծելով:

### **Հոդված 31 – Պաշտպանության ընդհանուր միջոցառումներ**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ պաշտպանելու տուժողների իրավունքները և շահերը, այդ թվում՝ նրանց՝ որպես վկաներ հատուկ կարիքները, հետաքննության և քրեական վարույթի բոլոր փուլերում, մասնավորապես.
  - ա նրանց տեղեկացնելով իրենց իրավունքների և հասանելի ծառայությունների մասին, և, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք չեն ցանկանում նման տեղեկատվություն ստանալ, նրանց բողոքի հիման վրա ձեռնարկված քայլերի, մեղադրանքների, հետաքննության կամ դատավարության ընդհանուր առաջընթացի, նրանց ունեցած դերի, ինչպես նաև գործերի վերջնական արդյունքի մասին,
  - բ երաշխավորելով, առնվազն տուժողների և նրանց ընտանիքների հանդեպ վտանգի հնարավորության դեպքերում, որ նրանք տեղեկացվեն, անհրաժեշտության դեպքում, մեղադրվող կամ մեղավոր ճանաչված անձի ժամանակավորապես կամ վերջնական ազատ արձակման մասին,
  - գ նրանց հնարավորություն ընձեռելով, ներպետական օրենսդրության ընթացակարգային կանոններին համահունչ, հանդես գալ, ապացույցներ տրամադրել և ընտրել իրենց տեսակետները, կարիքները և մտավայելություններն անմիջապես կամ միջնորդավորված կերպով ներկայացնելու և դրանց հանդեպ ուշադրություն գրավելու միջոցները.
  - դ նրանց ապահովելով համապատասխան աջակցության ծառայություններ՝ նրանց իրավունքների և շահերի հավոր պատշաճի ներկայացման և հաշվի առնման նկատառումով,
  - ե պաշտպանելով նրանց մասնավոր կյանքի իրավունքը, ինքնությունն ու համբավը և, ներպետական օրենսդրության համապատասխան, միջոցառումներ ձեռնարկելով՝ կանխելու նրանց ինքնության բացահայտմանը հանգեցնող որևէ տեղեկատվության հրապարակային տարածումը,
  - զ երաշխավորելով նրանց, ինչպես նաև նրանց ընտանիքների և նրանց կողմից հանդես եկող վկաների ապահովությունը նսեմացումից, վրիժառությունից և կրկնակի տուժումից,

- t երաշխավորելով, որ դատարանի և իրավապահ մարմինների շրջանակներում տուժողների և հանցագործների միջև շփում տեղի չունենա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան մարմիններն այլ որոշում են կայացնում՝ ելնելով երեխայի բարձրագույն շահերից, կամ երբ նման շփումը բխում է հետաքննության կամ դատավարության պահանջներից:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ համապատասխան մարմինների հետ առաջին անգամ կապ հաստատելուց հետո տուժողին մատչելի դարձվի համապատասխան դատական կամ վարչական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը:
  - 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի, որ տուժողին, նախատեսված դեպքերում անվճար հիմունքներով, մատչելի դարձվի իրավաբանական պաշտպանության ծառայություններ այն դեպքերում, երբ նրանք քրեական վարույթի շրջանակներում կողմի կարգավիճակ են ստանում:
  - 4 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է դատական մարմիններին հնարավորություն ընձեռնի տուժողի համար հատուկ ներկայացուցիչ նշանակել այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրության համաձայն նա ստանում է քրեական վարույթի շրջանակներում կողմի կարգավիճակ, և երբ ծնողական պատասխանատվություն կրողներին չի թույլատրվում նման դատավարությունում ներկայացնել՝ երեխային վերջինների և տուժողի միջև շահերի բախման արդյունքում:
  - 5 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան, հնարավորություն է ընձեռնում խթմերին, հիմնադրամներին, ընկերակցություններին կամ կառավարական կամ ոչ կառավարական կազմակերպություններին աջակցել և/կամ օգնություն ցուցաբերել տուժողներին՝ նրանց համաձայնությամբ, սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումներին առնչվող քրեական վարույթի ընթացքում:
  - 6 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ սույն հոդվածի դրույթների համաձայն տուժողներին տրամադրված տեղեկատվությունն ապահովվում է նրանց տարիքին և հատնությանը համապատասխանեցված ձևով և նրանց համար հասկանալի լեզվով:

### **Հոդված 32 – Դատավարությանն ընթացք տալը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ սույն կոնվենցիայի համապատասխան սահմանված օրինախախտումների հետաքննությունը կամ դատաքննությունը կախված չլինի տուժողի ցուցմունքից կամ մեղադրանքից, և որ դատավարությունը շարունակվի, նույնիսկ եթե տուժողը հրաժարվել է տրված ցուցմունքից:

### **Հոդված 33 – Վաղնության ժամկետ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ Հոդվածներ 18-ի, 19-ի պարբերություն 1.ա-ի և բ-ի և 21-ի պարբերություն 1.ա-ի և բ-ի համապատասխան սահմանված օրինախախտումների առնչությամբ դատավարություն սկսելու թույլատրելի ժամկետը բավարար է դատավարությունը տուժողի չափահասության հասնելուց հետո սկսելու համար և համաչափ է խնդրո առարկա հանցանքի ծանրությանը:

### **Հոդված 34 – Հետաքննություն**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ որդեգրում է անյախի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու հետաքննության համար պատասխանատու անձանց, մարմինների կամ ծառայությունների մասնագիտացումը երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների դեմ պայքարում կամ այդ նպատակով անձանց վերապատրաստումը: Նշված մարմինները կամ ծառայությունները պետք է համապատասխան ֆինանսական միջոցներ ունենան:

- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ տուժողի փաստացի տարիքի անհատակությունը չկանխի քրեական հետաքննություն սկսելը:

**Հոդված 35 – Երեխայի հետ հարցազրույցը**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ.
  - ա. երեխայի հետ հարցազրույցները տեղի ունենան համապատասխան մարմիններին փաստերի գեկուցումից հետո առանց չհիմնավորված հետաձգումների,
  - բ. երեխայի հետ հարցազրույցները, անհրաժեշտության դեպքում, տեղի ունենան այդ նպատակի համար նախատեսված կամ հարմարեցված վայրում,
  - գ. երեխայի հետ հարցազրույցները անցկացվեն այդ նպատակով վերապատրաստված մասնագետների կողմից,
  - դ. հնարավորության և անհրաժեշտության դեպքում, նույն անձինք անցկացնեն երեխայի հետ բոլոր հարցազրույցները,
  - ե. հարցազրույցների թիվը հնարավորին կերպով սահմանափակվի և խստորեն պայմանավորված լինի քրեական վարույթի նպատակներով,
  - զ. երեխային հնարավորություն ունենա ուղեկցել նրա իրավաբանական ներկայացուցիչը կամ, ըստ նպատակահարմարության, երեխայի ընտրությամբ որևէ մեծահասակ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավոր պատճառաբանությունների հիման վրա խնդրո առարկա անձի առնչությամբ հակառակ որոշում է կայացվել:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ տուժողի կամ, նպատակահարմարության դեպքում, երեխավկայի հետ բոլոր հարցազրույցները տեսահանվեն և տեսահանված հարցազրույցները որպես ապացույց ընդունվեն դատավարության ընթացքում՝ ներպետական օրենսդրության կանոններին համապատասխան:
- 3 Երբ տուժողի տարիքը հստակ չէ, և հիմքեր կան կարծելու, որ տուժողը երեխա է, պարբերություններ 1-ում և 2-ում նշված միջոցառումները կիրառվում են մինչև նրա տարիքը հստատելը:

**Հոդված 36 – Քրեական դատավարություն**

- 1 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում, իրավաբանների մասնագիտության ինքնավարությունը կարգավորող կանոններին համապատասխան ուշադրություն դարձնելով, երաշխավորելու, որ երեխաների իրավունքներին և երեխաների սեռական շահագործմանը և սեռական բնույթի բռնություններին վերաբերող վերապատրաստման դասընթացներ են մատչելի ի շահ գործի վարույթում ընդգրկված բոլոր անձանց՝ հատկապես դատավորների, դատախազների և իրավաբանների:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կանոններին համապատասխան երաշխավորելու, որ.
  - ա. դատավորն իրավասու լինի գործի լսումը ոչ հրապարակային հայտարարել,
  - բ. տուժողին հնարավորություն ընձեռվի դատարանում հանդես գալ առանց ներկա լինելու՝ մասնավորապես համապատասխան հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ:

**Գլուխ VIII – Տվյալների գրանցում և պահպանում**

**Հոդված 37 – Մեռական բնույթի հանցագործությունների համար մեղավոր ճանաչված անձանց մասին պետական տվյալների գրանցումը և պահպանումը**

- 1 Սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների կանխարգելման և հետաքննության նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում, ներպետական օրենսդրությամբ նախատեսված անձանկան տվյալների պաշտպանությանը վերաբերող դրույթների և այլ համապատասխան կանոնների և երաշխիքների համապատասխան՝ հավաքելու և պահպանելու սույն կոնվենցիայի համաձայն սահմանված օրինախախտումների համար մեղավորվող անձանց ինքնությամբ և գենետիկական հատկանիշներին (ԴՆԹ) առնչվող տվյալներ:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ներկայացնում է պարբերություն 1-ի նպատակների համար պատասխանատու կոնկրետ մեկ պետական մարմնի անվանումը և հասցեն:
- 3 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ պարբերություն 1-ում հղված տեղեկատվությունը կարող է փոխանցվել մեկ այլ Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններին՝ ներպետական օրենսդրությամբ և համապատասխան միջազգային պայմանագրերով սահմանված պայմաններին համահունչ:

**Գլուխ IX – Միջազգային համագործակցություն**

**Հոդված 38 – Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքներ և միջոցառումներ**

- 1 Պայմանավորվող կողմերը համագործակցում են միմյանց հետ՝ սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան և առնչվող համապատասխան միջազգային և տարածաշրջանային պայմանագրերի, միասնական կամ փոխադարձ օրենսդրության և ներպետական օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածությունների ամենալայն հնարավոր կիրառման միջոցով.
  - ա. երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների կիրառումը կանխելու և այդ երևույթների դեմ պայքարելու նպատակով,
  - բ. տուժողներին պաշտպանելու և աջակցելու նպատակով,
  - գ. սույն կոնվենցիայի համապատասխան սահմանված օրինախախտումներին առնչվող հետաքննությունների և գործերի վարույթի նպատակով:
- 2 Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ սույն կոնվենցիայի համապատասխան սահմանված օրինախախտումից ոչ իր բնակության Պայմանավորվող կողմի տարածքում տուժած անձը հնարավորություն ունենա բողոք ներկայացնել իր բնակության պետության իրավասու մարմիններին:
- 3 Եթե այն Պայմանավորվող կողմը, որի համար քրեական կամ հանձնման գործերում փոխադարձ իրավական աջակցությունը պայմանավորված է պայմանագրի առկայությամբ, իրավական աջակցության կամ հանձնման հայց է ստանում այն Պայմանավորվող կողմից, որը նման պայմանագիր չի կնքել, կարող է սույն կոնվենցիայի համապատասխան սահմանված օրինախախտումներին առնչվող քրեական կամ հանձնման գործերում սույն կոնվենցիան համարել փոխադարձ իրավական աջակցության իրավական հիմք:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ փորձ է կատարում ինտեգրելու, ըստ նպատակահարմարության, նրելխանների սննդական շահագործման և սննդական բնույթի բռնությունների իրականացման կանխարգելումը և այդ դրսևորումների դեմ պայքարը երրորդ պետություններին զարգացման նպատակով տրամադրվող աջակցության ծրագրերում:

## **Գլուխ X – Վերահսկման մեխանիզմ**

### **Հոդված 39 – Պայմանավորվող կողմերի կոմիտե**

1. Պայմանավորվող կողմերի կոմիտեն կազմված է սույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից:
2. Պայմանավորվող կողմերի կոմիտեն ժողովում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Առաջին նիստի կայացումը նախատեսվում է սույն կոնվենցիան ստորագրած կողմերից այն վավերացրած տասներորդ Պայմանավորվող կողմի համար կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Հետագա նիստերը տեղի են ունենում Պայմանավորվող կողմերի առնվազն մեկ երրորդի կամ Գլխավոր քարտուղարի պահանջով:
3. Պայմանավորվող կողմերի կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:

### **Հոդված 40 – Այլ ներկայացուցիչներ**

1. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, Մարդու իրավունքների հանձնակատարը, Հանցավորության հիմնախնդիրների հարցերով եվրոպական կոմիտեն (ՀՀՏԵԿ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի այլ համապատասխան միջպետական կոմիտեներն իրենց ներկայացուցիչն են նշանակում Պայմանավորվող կողմերի կոմիտեում:
2. Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի այլ մարմինների իրենց ներկայացուցիչն նշանակել Պայմանավորվող կողմերի կոմիտեում՝ վերջինի հետ խորհրդակցելուց հետո:
3. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և հատկապես ոչ կառավարական կազմակերպությունները կարող են Պայմանավորվող կողմերի կոմիտեում որպես դիտորդներ ներկա գտնվել՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան կանոններով սահմանված ընթացակարգի համաձայն:
4. Վերոնշյալ պարբերություններ 1-ից 3-ի համաձայն նշանակված ներկայացուցիչները Պայմանավորվող կողմերի կոմիտեի նիստերին մասնակցում են առանց քվեարկելու իրավունքի:

### **Հոդված 41 – Պայմանավորվող կողմերի կոմիտեի գործառույթները**

1. Պայմանավորվող կողմերի կոմիտեն հսկում է սույն կոնվենցիայի կիրարկումը: Պայմանավորվող կողմերի կոմիտեի կանոնակարգով սահմանվում է սույն կոնվենցիայի կիրառման գնահատման ընթացակարգը:
2. Պայմանավորվող կողմերի կոմիտեն բարենպաստ պայմաններ է ստեղծում Պետությունների միջև տեղեկատվության, փորձառության և լավագույն պրակտիկայի հավաքագրման, վերլուծության և փոխանակման համար՝ նրելխանների սննդական շահագործման և սննդական բնույթի բռնությունների իրականացման կանխարգելման և այդ դրսևորումների դեմ պայքարի բնագավառում նրանց կարողունակությունը բարելավելու նպատակով:
3. Պայմանավորվող կողմերի կոմիտեն նաև, ըստ նպատակահարմարության.
  - ա. բարենպաստ պայմաններ է ստեղծում սույն կոնվենցիայի արդյունավետ օգտագործման և կիրարկման համար, ինչը ներառում է սույն կոնվենցիայի շրջանակներում ցանկացած խնդրի և որևէ հռչակագրից կամ վերապահումից բխող ազդեցությունների հայտնաբերումը,

- p. կարծիք է արտահայտում սույն կոնվենցիայի կիրարկմանն առնչվող ցանկացած խնդրի շուրջ և բարենպաստ պայմաններ է ստեղծում էական իրավական, քաղաքական կամ տեխնոլոգիական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար:
- 4 Սույն հոդվածով սահմանված գործառնությունների իրականացման շրջանակներում Պայմանավորվող կողմերի կոմիտեին աջակցություն է ցուցաբերում Եվրոպայի խորհրդի Բարտադարությունը:
- 5 Հանցավորությունների հիմնախնդիրների հարցերով եվրոպական կոմիտեին (ՀՀՏԵԿ) պարբերաբար տեղեկացվում է սույն հոդվածի պարբերություններ 1-ում, 2-ում և 3-ում նշված գործողությունների վերաբերյալ:

**Գլուխ XI – Այլ միջազգային փաստաթղթերի հետ հարաբերությունները**

**Հոդված 42 – Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և Երեխաների վաճառքի, երեխաների պռնկության և երեխաների պռնկագրության մասին կամրնտիր արձանագրության հետ հարաբերությունները**

Սույն կոնվենցիան չի ազդում Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայից և Երեխաների վաճառքի, երեխաների պռնկության և երեխաների պռնկագրության մասին կամրնտիր արձանագրությունից բխող իրավունքների և պարտավորությունների վրա և միտված է նշված փաստաթղթերով նախատեսված պաշտպանությունը ընդլայնելուն և դրանցում տեղ գտած չափանիշների զարգացմանը և համալրմանը:

**Հոդված 43 – Այլ միջազգային փաստաթղթերի հետ հարաբերությունները**

- 1 Սույն կոնվենցիան չի ազդում այլ այն միջազգային փաստաթղթերի դրույթներից բխող իրավունքների և պարտավորությունների վրա, որոնց կողմ են հանդիսանում կամ կողմ կարող են դառնալ սույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերը և որոնք պարունակում են սույն կոնվենցիայի շրջանակներում կարգավորվող խնդիրների վերաբերյալ դրույթներ և որոնք երաշխավորում են սեռական շահագործումից կամ սեռական բնույթի բռնություններից տուժած երեխաների առավել մեծ պաշտպանություն և աջակցություն:
- 2 Սույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերը կարող են միմյանց միջև երկկողմանի և բազմակողմանի պայմանագրեր կնքել սույն կոնվենցիայի շրջանակներում կարգավորվող խնդիրների վերաբերյալ՝ դրա դրույթները համալրելու կամ ամրապնդելու կամ առկա սկզբունքների կիրառման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:
- 3 Եվրոպական Միության անդամ հանդիսացող Պայմանավորվող կողմերն իրենց փոխադարձ հարաբերություններում առաջնորդվում են Համայնքային և Երվոպական Միության՝ տվյալ խնդիրը կարգավորող և կոնկրետ դեպքի համար կիրառելի կանոններով՝ առանց խոչընդոտելու սույն կոնվենցիայի խնդրո առարկան ու նպատակը և այլ Պայմանավորվող կողմերի կողմից սույն կոնվենցիայի լիարժեք կիրառումը:

## Գլուխ XII – Կոնվենցիայի փոփոխությունները

### Հոդված 44 – Փոփոխություններ

- 1 Որևէ Պայմանավորվող կողմի ներկայացրած սույն կոնվենցիայի փոփոխության ցանկացած առաջարկ հաղորդվում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և նրա կողմից ուղարկվում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, սույն կոնվենցիան ստորագրած ցանկացած կողմի, ցանկացած Պայմանավորվող կողմ պետության, Եվրոպական համայնքին, Հոդված 45-ի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն կոնվենցիան ստորագրելու հրավեր ստացած ցանկացած պետության և Հոդված 46-ի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության:
- 2 Որևէ կողմի առաջարկած փոփոխությունը փոխանցվում է Հանգստությունների հիմնախնդիրների հարցերով Եվրոպական կոմիտեին (ՀՀԵԿ), որը Նախարարների կոմիտեին է հանձնում առաջարկվող փոփոխության վերաբերյալ իր կարծիքը:
- 3 Նախարարների կոմիտեն ուսումնասիրում է առաջարկվող փոփոխությունը և ՀՀԵԿ-ի ներկայացրած կարծիքը և Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող սույն կոնվենցիայի կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է ընդունել փոփոխությունը:
- 4 Սույն հոդվածի պարբերություն 3-ի համաձայն Նախարարների կոմիտեի ընդունած ցանկացած փոփոխության տեքստ ուղարկվում է կողմերին՝ ընդունման նպատակով:
- 5 Սույն հոդվածի պարբերություն 3-ի համաձայն ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է բոլոր Պայմանավորվող կողմերի կողմից այն ընդունելու մասին Գլխավոր քարտուղարին տեղեկացնելուց հետո մեկամսյա ժամկետի լրանալուն:

## Գլուխ XIII – Եզրափակիչ դրույթներ

### Հոդված 45 – Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

- 1 Սույն կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, դրա մշակմանը մասնակցած անդամ չհանդիսացող պետությունների, ինչպես նաև Եվրոպական համայնքի ստորագրման համար:
- 2 Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:
- 3 Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է հինգ ստորագրող Պայմանավորվող կողմերի, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առնվազն երեք անդամ պետությունների՝ նախորդ պարբերության դրույթների համաձայն սույն կոնվենցիայով պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունն արտահայտելուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն:
- 4 Սույն կոնվենցիայով պարտավորված լինելու մասին հետագայում իր համաձայնությունն արտահայտած պարբերություն 1-ում նշված ցանկացած պետության կամ Եվրոպական համայնքի նկատմամբ այն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

#### **Հոդված 46 – Կոնվենցիային միանալը**

- 1 Սույն կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է, սույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերի հետ խորհրդակցությունից հետո և նրանց միաձայն համաձայնության պարագայում, հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության, որը մասնակցել է սույն կոնվենցիայի մշակմանը, միանալ սույն կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության Հոդված 20.դ-ով նախատեսված մեծամասնության կողմից կայացված որոշման և ձայն ունեցող իրավասու Բարձր պայմանավորվող կողմերի՝ Նախարարների կոմիտեում ձայնի իրավունք ունեցող իրավասու ներկայացուցիչների միաձայն քվեարկության պայմաններում:
- 2 Միացող ցանկացած Պետության առնչությամբ կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միացման փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

#### **Հոդված 47 – Տարածքային կիրառումը**

- 1 Ցանկացած պետություն կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ սույն կոնվենցիան պետք է կիրառվի:
- 2 Ցանկացած Պայմանավորվող կողմ հետագայում ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ կարող է տարածել սույն կոնվենցիայի կիրառումը հայտարարության մեջ նշված ցանկացած այն տարածքի նկատմամբ, որի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է կամ որի համար միջազգային պատասխանատվություն է կրում: Տվյալ տարածքի նկատմամբ կոնվենցիան ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից տվյալ հայտարարությունն ստանալուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:
- 3 Նախորդ նրկու պարբերությունների շրջանակներում արված ցանկացած հայտարարություն կարող է չեղյալ համարվել տվյալ հայտարարությունում նշված ցանկացած տարածքի առնչությամբ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հայտարարությունը չեղյալ է համարվում Գլխավոր քարտուղարի կողմից տվյալ ծանուցումն ստանալուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

#### **Հոդված 48 – Վերապահումներ**

Սույն կոնվենցիայի դրույթների առնչությամբ որևէ վերապահում չի թույլատրվում՝ բացառությամբ բացահայտ սահմանված վերապահումների: Ցանկացած վերապահում կարող է ցանկացած ժամանակ հետ կանչվել:

#### **Հոդված 49 – Չեղյալ հայտարարում**

- 1 Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ չեղյալ համարել սույն կոնվենցիան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
- 2 Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից տվյալ ծանուցումն ստանալուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

### Հոդված 50 – Ծանուցում

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, սույն կոնվենցիան ստորագրած ցանկացած կողմի, ցանկացած Պայմանավորվող կողմ պետության, Եվրոպական համայնքին, Հոդված 45-ի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն կոնվենցիան ստորագրելու հրավեր ստացած ցանկացած պետության և Հոդված 46-ի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության ծանուցում է.

- ա. յուրաքանչյուր ստորագրման մասին,
- բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերի ի պահ հանձնման մասին,
- գ. Հոդվածներ 45-ի և 46-ի համաձայն սույն կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին,
- դ. Հոդված 44-ի համաձայն ընդունված ցանկացած փոփոխության և տվյալ փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- ե. Հոդված 48-ի համաձայն արված ցանկացած վերապահման մասին,
- զ. Հոդված 49-ի համաձայն ցանկացած չեղյալ հայտարարման մասին,
- է. սույն կոնվենցիային առնչվող ցանկացած այլ փաստաթղթի, ծանուցման կամ հաղորդագրության մասին:

Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն կոնվենցիան:

Կատարված է Լանգարտում, 2007 թվականի հոկտեմբերի 25-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը, սույն կոնվենցիայի մշակմանը մասնակցած անդամ չհանդիսացող պետություններին, Եվրոպական համայնքին և սույն կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետությանը: